



Արարատի մարզ, Արարատ, Շահումյան փող., 34 շենք
Էլ. հասցե: infoararat@aarhus.am, vigenchilingaryan@gmail.com
Հեռ.

N AA - 002« 27 » մայիս 2014թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՝ պարոն Գրիգորյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրիուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Արարատի Օրիուս կենտրոնին տրամադրել, Արարատյան դաշտավայրի ստորերկրյա, արտեզյան և խմելու ջրերի հաշվեկշռի հետ կապված և այլ պաշտոնական տեղեկատվություն:

- 1) 2014 թվականի դրությամբ, Արարատյան դաշտավայրում հաշվառված գործող և շահագործվող ստորերկրյա հորերի ցանկը՝ ըստ տարեկան միջին ջրոգտագործման ծավալների, շահագործման ժամանակաշրջանի և պլանային ստուգման կամ մոնիթորինգի արդյունքների: Դասակարգելով դրանք ըստ նպատակային տիպերի՝ ձևաբանութարաններ, ոռոգում, տեխնիկական, խմելու նպատակ:
- 2) 2010-2014 թվականների վերահսկիչ ստուգումների կամ գույքագրման արդյունքում, եթե այդպիսիք կան, հայտնաբերված, ապօրինի կերպով շահագործվող ստորերկրյա հորերի և լրված ինքնաշտրվանող հորերի ցանկը՝ ըստ ընկերությունների անվանումների, գործունեություն իրականացնող փաստացի հասցեների:
- 3) Զեր կողմից իրականացվող պլանային և ոչ պլանային ստուգողական միջոցառումների, եզրակացությունների արդյունքները ստորերկրյա հորերի նկատմամբ 2010-2014 թվականների վերաբերյալ:
- 4) 2004-2014 թվականների ստորերկրյա հորերի ջրերի փորձագիտական, քիմիական անալիզների արդյունքները, եթե այդպիսիք կան, կապված ջրի որակի փոփոխության, ծավալների ավելացման կամ նվազման, հզորությունների փոփոխման, ինչպես նաև 1999 թվականից մինչ օրս հիդրոերկրաբանական կառուցվածքի փոփոխման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների մասին տեղեկատվություն:
- 5) 2004 թվականից մինչ օրս, օրիանական հորատվելուց առաջ տարածքային փորձագիտական արդյունքների կամ եզրակացությունների մասին տեղեկատվություն՝ կապված

ստորերկրյա ջրերի մատչելիության, ռեսուրսների քանակի, քիմիական կազմի փոփոխության և որակի վերաբերյալ:

- 6) Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի՝ աղբյուրների, C1, C2 կարգի հորատանցքերի, հաստատված և օգտագործվող առավելագույն և միջին տարեկան պաշարները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացրուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Արարատի Օրիուս կենտրոնի համակարգող՝

Վ. Չիլինգարյան


A handwritten signature in blue ink, appearing to read "Վ. Չիլինգարյան". It is positioned above a blue horizontal line.